



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՀԱՆԳԻՍՏ ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ**

Չորեքշաբթի, 15 Ապրիլի առաւօտուն, իր աչքերը առյաւէտ փակեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի մայրը՝ Տիրամայր Մարի Մարտիրոսեան:



Այս տխուր առիթով, Ազգ. Առաջնորդարանի դիւանը լոյս ընծայեց հաղորդագրութիւն մը, գոյժելով Տիրամօր կորուստը: Այս առիթով, Թեմիս Հոգեւորականաց Դասը, Կրօնական Ժողովը, Ազգային Վարչութիւնը, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինը, Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը, Ազգ. Առաջնորդարանի անձնակազմը եւ յարակից մարմինները ցաւակցութիւն յայտնեցին Առաջնորդ Սրբազանին, քոռջ եւ քեռայրին՝ Տէր եւ Տիկին Չաւեն եւ Անի Խոստիկեանի, եղբօր, քոյրերուն եւ ընտանեկան պարագաներուն:

Տիրամօր յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 18 Ապրիլի կէսօրէ առաջ ժամը 9:30ին, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ապա, անոր մարմինը պիտի ամփոփուի Հոլիվուտ Հիլզի Ֆորեսթ Լոն գերեզմանատան մէջ: Արարողութիւններէն ետք, հոգեճաշ պիտի մատուցուի Ֆերահեան Վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ:

Առաջնորդ Սրբազանին ու ընտանիքին փափաքով, կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւն կատարել Ազգ. Առաջնորդարանի «Յակոբ եւ Մարի Մարտիրոսեան Յիշատակի Հիմնադրամ»ին:

## **THE PASSING OF DIRAMAYR MARIE MARDIROSSIAN**

With deep sorrow we hereby announce the passing of H.E. Archbishop Moushegh Mardirossian's mother, Diramayr Marie Mardirossian, which occurred on the morning of Wednesday, April 15<sup>th</sup>, 2009.

On this sad occasion, Clergy, Religious and Executive Councils, Board of Regents, Ladies Auxiliary, staff, and affiliated committees and bodies express their profound condolences to the Prelate, his sister Mr. and Mrs. Zaven and Ani Khosdikian, brother, sisters, and extended family members on the loss of their beloved mother.

The funeral service will take place on Saturday, April 18<sup>th</sup>, at 9:30 a.m. at St. Mary's Church in Glendale, followed by the burial at Hollywood Hills Forest Lawn. A memorial luncheon will take place at "Avedissian" Hall of Ferrahian School in Encino.

In lieu of flowers donations can be made to the Western Prelacy "Hagop and Marie Mardirossian Memorial Fund".